



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ltn

✓ 1362

'19 99



Գրառ Է ֆր. 1.50:

ՍՐԲՈՅՆ

ՍԱՀԱԿԱՅ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԵՒ

ՄԵՍՐՈՎՊԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ

ՁԵՌՆԱՍՈՒՆ ՈՒ ԵՐԻՅԱԳՈՅՆ ԱՇԱԿԵՐՏՔ

ԵՒ

ԱՌԱՋԻՆ ԹՈՐԳՄԱՆԻՉՔ ԵՒ ԴՈՐՈՂՆ

ԳՐԵՑ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԻՍՔՃԵԱՆ

ՈՒՍՈՒՑՔԷ ՀԱՅԵՐԵՆ ԼԵՋՈՒԻ



Վ Ի Ն Ն Ն Ե

Մ Ի Ի Թ Ա Ր Ե Ա Ն Տ Պ Ա Ր Ա Ն

1902.

Արտատրուած էր. Թեոդ. Բ.
այլապէս Բաղամբ
8/11 Տարի 1913
Վրաստան.
9(47.925) ՍՐԲՈՅՆ

ՍԱՀԱԿԱՅ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԵՒ

ՄԵՍՐՈՎՊԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ

ՉԵՌՆԱՍՈՒՆ ՈՒ ԵՐԻՅԱԳՈՅՆ ԱՀԱԿԵՐՏԷ

ԵՒ

ԱՌԱՋԻՆ ԹՄԲԳՄԱՆԻՉԷ ԵՒ ԴԱՐՈՒՆ

ԴՐԵՑ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԻՍՔՃԵԱՆ

ՈՒՍՈՒՑԻՉ ՀԱՅՏԵՐԻՆ ԼԵՂՈՒԻ



Վ. Ի. Ն. Ն. Ա.

Մ Ե Ի Թ Ա Ր Ե Ա Ն Տ Պ Ա Ր Ա Ն

1902.

Ա Ձ Գ

Այս մեր դուզնարեայ աշխատատիրութիւնն յուսանք թէ ախորժ յօժարութեամբ կը կարդան ըանասէրք, որոնց եթէ ընդունելի երեւի այն՝ միտք ունինք Տերամբ ապագային մէջ եւս հետզհետէ սոյնպիսի նիւթոց վրայ գրելու առանձինն:

Ինչպէս ընթերցողք պիտի տեսնեն մեր փոյթն ու ջանքն եղած է ամենայն հաւատարմութեամբ խօսիլ տալ ազգային պատմագիրները, նշանակելով իւրաքանչիւր վկայութեան աղբիւրն ու տեղը: — Հետագայ էջերն հանուած են “Հանդէս ամսօրեայ”, պարբերական թերթէն:

Յ. Վ. Մ.

ԱՌԱՋԻՆ ԹԱՐԳՄԱՆԻՉՔ

Ինչպէս Սահակ եւ Մեսրոպ անգագար զբաղած էին “ի թարգմանել, ի գրել եւ յուսուցանել”, կըսէ Կորիւն (էջ 22), նոյնպէս անշուշտ կ'ընէին նաեւ իրենց աշակերտներն, որոնց թիւը վաթսուներեւ աւելի ըլլալու էր. կը կարգանք Պատմութիւն վասն Սրբոյն Սահակայ հայրապետին եւ Մեսրոպայ վարդապետին կոչուած անանուն մատենագրի մը գրուածքին մէջ թէ՛ իրենք “ընտրեցին թուով վաթսուն յաշակերտելոցն, զառաւել ուշիմս” (Սոփերք հայկ. Բ. 14. Վենետիկ 1853): — Բայց հոս մենք մի միայն անոնց երիցագոյն աշակերտաց վրայ պիտի խօսինք, որոնց յիշատակութիւնը կ'ընեն մեզի յակամէ անուանէ 1. Կորիւն՝ Պատմութիւն վարուց եւ մահուան Սրբոյն Մեսրոպայ Վարդապետի (Վենետիկ 1894), 2. Մովսէս Խորենացի՝ Պատմութիւն Հայոց (Վենետիկ 1881), 3. Ղազար Փարպեցի՝ Պատմութիւն Հայոց եւ թուղթ առ Վահան Մամիկրանեան (Վենետիկ 1891) եւ 4. Եղիշէ Վարդապետ՝ Վասն Վարդանայ եւն. (Վենետիկ 1893): Ասոնք եղան յիրաւի որ մեր ոսկեղէն գպրութեան հաստատուն հիմերը գրին, եւ Առաջին թարգմանիչք կոչուցան իսկ:

Արդ՝ ըստ յիշեալ պատմագրաց՝ ասոնցմէ նշանաւորներն եղած են քսան եւ վեց եկեղեցականք, եւ երկու հոգի աշխարհականներէն. ահա՛ ամբողջ անուանց ցուցակը կը դնենք կարգաւ: — Տես նաեւ Հայկական հին դպրութեան Պատմութիւն, Գ. տպագր. վեներտիկ 1897, էջ 289—296, ուր սոյն անուանք մեծաւ մասամբ նշանակուած են:

Ա. ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ:

1. Յովսէփ քահանայ՝ կաթողիկոս Աբրահամ Խոստովանող Եպ. Անանիաս կամ Անանիա Եպիսկոպոս Գինթ կամ Գնիթ Եպիսկոպոս
5. Եղնիկ կամ Եղնակ Եպիսկոպոս Երեմիա Եպիսկոպոս Կորիւն Եպիսկոպոս Մովսէս Եպիսկոպոս Մուշեղ կամ Մուշէ Եպիսկոպոս
10. Սամուէլ Եպիսկոպոս Տէր Խորձենացի Եպիսկոպոս Աղան Արծրունի Արձան Գիտ կամ Գիւտ
15. Դանան Ենովք Երեմիա երէց Թադիկ կամ Թողիկ Խոսրով կամ Խոսրովիկ

20. Ղեւոնդ երէց կամ Ղեւոնդէս Մուշէ Տարօնեցի Յովհան Յովհան Եկեղեցացի Յովնաթան քահանայ
25. Յովսէփ Պաղնացի Տիրայր:

Բ. ԱՇԽԱՐՀԱԿԱՆՔ:

Ղահան Ամատունի
Հմայեակ Մամիկոնեան:

1. Յովսէփ քահանայ եւ Կաթողիկոս Ս. Մեսրոպայ աշակերտն էր «ի վայոյ Չորոյ՝ ի Խողջիմ գեղջէ» (Մ. Խոր. գիրք Գ, ԳԼ. Կէ, 570. — Ղլր. Փրպ. Դր. Ա. ԳԼ. ԺԹ, 117—118). «Սուրբն Յովսէփ ի վայոց Չորոյ ի գեղջէ Հողոցմանց» (ԵղՂ. Յեղ. Ը, 341): Ինքը «Թէպէտ եւ երէց էր ըստ ձեռնագրութեան, այլ զկաթողիկոսութեան Հայոց զաթոռն ունէր», — «Թէպէտ եւ զձեռնագրութիւն երիցութեան ունէր, սակայն յաթոռ կաթողիկոսութեանն էր վիճակեալ արժանաւորապէս» (Ղլր. Փրպ. Դր. Բ. ԳԼ. ԻԳ, 138 եւ ԳԼ. ԼԸ, 231):¹ Մեսրոպայ մահուանէն ետքը

¹ Թէ ինչպէս Սուրբն Յովսէփ լոկ քահանայ ըլլաւ՝ էր միանգամայն կաթողիկոս Հայոց, եւ Աբաղաջատու Ժողովոյն մէջ գրուած նամակին գլուխն՝ իւր անուանակալութիւնն էր «Եպիսկոպոս Աբրահամայ», — գծուարին չէ լուծել եւ մեկնել այս խնդիրը: Կորիւն գիտէ եւ կը գործածէ «Եպիսկոպոս տեսուչ եկեղեցւոյ» (24) բացատրու-

“ յաջորդեաց զաթոռ հայրապետութեան աշխարհիս Հայոց ” (Անդ. Գր. Ա. գլ. ԺԹ, 117), եւ եղաւ “ արդարեւ կաթուղիկոս Հայոց ” եւ “ սուրբ կաթուղիկոս ” (Անդ. գլ. խդ, 259. ծդ, 308. ծէ, 341—43). Իսկ յամին 449 “ Ի թագաւորանիստ տեղին յԱրտաշատ ” (Եղշ. Յեղ. Բ, 50) գումարուած ժողովոյն նախագահեց, եւ Պարսից ուղղեալ նամակին գլուխը՝ իւր անունն առաջին զրուած է այսպէս. “ Յովսէփ եպիսկոպոս Այրարատոյ ” (Անդ. 49): Սա՛ եւս մին էր գլխաւոր աշակերտներէն. “ անո անք գլխաւոր աշակերտացն ժողովելոցն՝ են այս. առաջնում՝ Յովսէփ ” (Կոր. 44). “ գլխաւոր, վերակացու, տեղապահ... առաջինն Յովսէփ գլխաւոր ժողովոյն ” (Անդ. 46). Ինքն էր ո՛չ միայն “ այր մի պատուական ” (Անդ. 8), այլ եւ “ զգաստ՝ զգուշագոյն հրամանաց վարդապետութեան ” (Անդ. 44), իրեն հրամանաւր գրած է Կորին Ս. Մետրովպայ Պատմութիւնը (Անդ. 8): — Երբոր հրաման ելաւ իրեն եւս մարտիրոսական մահուամբ մեռնելու՝ սրով գլխատուե-

թիւնս. Իսկ Մովսէս Խորենացի նոյնանշան կը գնէ կաթուղիկոսութեան էպիսկոպոսութեան անունը, գրելով. “ յետ ընդ հնգետասան ամաց եպիսկոպոսութեան մեծին Վրթանայ ” — “ Ինդրեն նախարարն Հայոց այր արժանի կացուցանել յեպիսկոպոսութիւն փոխանակ Յովսէփ ” (Գիրք Գ. գլ. Ժա, 419. եւ Ժգ, 427): Որչափ կ'երեւի այն յուզեալ ժամանակաց միջոցին Յովսէփ կրցած չէր եպիսկոպոս օձուիլ: Հոս անցողակի եւս ըսենք՝ թէ Այրարատ անունը բոլոր Հայոց աշխարհին տեղը գրուած է, ինչպէս ունինք ի Սուրբ Գիրս “ Երբիք Արարատայ ” (Ճնն. ք. 4), եւ “ Երկիր Արարատայ ” (Գ. թղբ. ԺԹ, 37):

լով, այն ատեն դարձաւ ըսաւ իրեն Սուրբն Ղեւոնդ. “ մատիք, յառաջեա՛ ընդդէմ սրոյն, զի դու աստիճանաւ ի վերես քան զամենեսեան ” (Եղշ. Յեղ. ք, 340—41). մարտիրոսացած է Ղեւոնդեանց քահանայից հետ ի Պարսկաստան՝ Նիւշապուհ շահաստանին (Թագաւորական քաղաքին) մտերը 454 թուականին:

2. Աբրահամ՝ խոստովանող՝ եպիսկոպոս Բզնունեանց: Ինքը Վարդանանց պատերազմէն ետքը՝ Ղեւոնդեանց քահանայից հետ Պարսկաստան աքսորք տարուեցաւ, եւ հոն պարսկերէն լեզուէ հայերէն ոսկեզինիկ գրչաւու վեմամակերտ բանաստեղծական խանդիւթարգմանեց “ Պատմութիւն վարուց Սրբոյն Շմաւոնի եպիսկոպոսի եւ ճառ ի վկայան արեւելից ” (Սոփ. հայկ. Ի. Վննետիկ 1854) սքանչելի մատենիկն՝ որուն “ ի վկայան արեւ-

1 “ Արեւելեան վկայիցն պատմութիւնք, որ թարգմանեցաւ Աբրահամ խոստովանողէ, մինչ բանդարկեալ կայր ի Պարսիկս, ի պարսիկ լեզուէ ” (Հայկ. հին Գպր. էջք 295—96): Եւ այն գրքոյին 131 էջին մէջ սոսկեւ կը կարդանք. “ կատարեցէ իբրեւ գրչել զկամս քս. կացո (եւ ոչ թէ կէց) ” Տէր Բարեւ ի տեղի Բարեւէ ”: Հրատարակիչը հասարակ անուն կարծելով գծած բառերնիս՝ կ'ընէ 7 ծանօթութեան մէջ (էջ 158) թէ անոնք կու տան “ զիմաստ հախաւ կամ հակառակ իշխանի ” — Բնաւ ճիշդ չէ՛ սոյն մեկնութիւնը. պարսկերէն Բարեւ եւ երբայեցերէն Բարեւ համանշան են կիրոս Պարսից արքային անունն: Վերս յետեւ ավայրութեան մէջ՝ անշուշտ կ'ակնարկուի Սուրբ Գրոց հետեւեալ խօսքին. “ որ ասեմ ցկիրոս թէ իմաստնասլիք, եւ զաֆնայն կամ է՛ արասցե ” (Ես. Խգ, 28): Իսկ Զֆօնի ճառից ասորերէնէ թարգմանիչը՝ հինգ տեղ կիրոս անունն տեղ՝ կը գնէ “ կասոս արքայ Պարսից ” (էջն 305

ելից, մասը թերի ձեռքերնիս հասած է սկիզբէն (էջ 55) եւ վերջէն (155): Սոյն ճառը ստույգեամբ՝ յոմանց Եփրեմայ կ'ընծայուի. բուն հեղինակն է՝ կ'ըսէ մեծարգոյ Հ. Յովսէփ Վ. Գաթրճեան՝ Մարութեան (Գ.— Ե. դար), որուն երկմաննայ գրութեան մէկ կտորն է այն (Սրբ. Պատարագամատոյցք Հայոց, էջ 102 ծան. 1, եւ 150. Վիեննա 1897): Արրահամ Պարսից աշխարհին մէջ շատ մը չարչարանքներ կրեց Խորէն խոստովանողին հետ, եւ յետոյ Ատորեստան արսորուեցաւ, « յերկիրն Բաբելացւոց, ի գաւառ մի զոր Շահուղն անուանեն » (Եղջ. Յեղ. Ը, 357). — « կարեալ . . . զականջսն, ետուն տանել յԱտորեստան՝ ի գաւառն որ անուանեալ կոչի Շարուլ » (Ղլը. Փրպ. Գր. Բ. գլ. ծը, 360—61): Հոն 12 տարի մնայէն ետքը՝ դարձաւ « եկն եմուտ յաշխարհն Հայոց » (Եղջ. անդ. 363), ուր նաեւ « կատարեաց զկեանս իւր մեծաւ ճգնութեամբ » (Անդ. 365): Ղաղար Փարպեցի կը կոչէ զինքը « երանելի քահանայ կամ երէց » Գր. Բ. գլ. խը, 288. ծգ, 316. ծը, 357, (360 եւ 362). իսկ Եղեշէ « խոստովանող աշակերտ » (Յեղ. Ը, 349) Ղեւոնդեանց քահանայից կ'անուանէ զԱրրահամ, որուն ընկերը Խորէն այսպէս պատասխանած է դահճագետին. « առ ի ծնողաց ինձ Խորէն (անուն է), եւ դմա Արրահամ. իսկ ըստ շնորհատուր կարգիս՝ ծառայք Քրիստոսի եմք, եւ աշակերտք երանելի »

319. 320 երկեցս եւ 356. Կ. Պօլիս 1824): Հետեւորար Կերոս՝ Քրէշ եւ Կուսոս համանիշ են իրարու:

լեացն՝ զոր սպանէք » (Անդ. 350): Կը պատմե նաեւ Ղաղար Փարպեցի՝ թէ երբ երանելի երէցն Արրահամ արսորքէն դառնալով « եկն ի Հայս, տեսն իսկ իւր առանց ամենայն երկբայութեան զկերպարանս հրեշտակի ցուցեալ ծանուցանէր ամենայն տեսողաց զայրն. եւ ձեռնադրեալ յաստիճան եպիսկոպոսութեան աշխարհին Բղնունեաց, բազում ուղղութեանց աշխարհին մարդկան լինէր ուսուցիչ. եւ վախճանէր ի նմին կարգի ի բարեոք ծերութեան » (Անդ. գլ. ծը, 363): Ինքն ալ ուրիշներուն պէս ոչ սակաւ տառապանք կրած է ի մերայնոց իսկ, ինչպէս կը վկայէ նոյն պատմագիրն հետեւեալ մութ խօսքերով. « ի դէպ համարիմ . . . յիշել եւ զտէր Արրահամ զեպիսկոպոս, որում ըստ ծաթի (թերահաւատի) խորհրդոյն եւ չհանգուցանէր ի ծերութիւնս » (Թուղթ առ Վահ. Մամիկ. էջք 686—687):

3. Անանիաս, որ եւ Անանիա, Եպիսկոպոս Սիւնեաց աշխարհին: « Այր սուրբ եւ երեւելի, հայրաբարոյ ժառանգաւորաց եկեղեցւոյ » (Կոր. 24). Ինքն Եպիսկոպոս իսկ ձեռնադրուած էր Սահակ կաթողիկոսէն, « ի նոցունց իսկ ի վայրենեացն՝ եպիսկոպոս տեսուչ եկեղեցւոյն Սիւնեաց կարգել, որոյ անունն կոչէր Անանիաս » (Անդ. 24): Հայոց առ Պարսիկս ուղղեալ նամակին գլուխը՝ Արտաշատու ժողովոյն մէջ՝ Յովսէփ կաթողիկոսէն անմիջապէս ետքը կու գայ իւր անունը, « Տէր Անանիա Սիւնեաց Եպիսկոպոս » ըստ Ղլը. Փարպեցւոյ (Գր.

Բ. ԳԼ. ԻԳ. 138). *Մինչդեռ մետասաներորդն է՝ ըստ Եղեշէի՝* «Անանիա Եպիսկոպոս Սիւնեաց», (Յեղ. Բ. 49): *Մեսրոպ Աղուանից աշխարհն իջնելով՝ իրեն քովը կանչեց Բենիամին շնորհաւոր թարգմանը,* «զոր անդանդաղ արձակեաց մանուկն Վասակ Սիւնեաց տէր՝ ի ձեռն Անանիայի եպիսկոպոսի իւրոյ», (Մ. Խոր. ԳԼ. ԺԳ, 522—23): — *Անշուշտ իւր ոսկեղինիկ գրէն ելած չեն* «ի խորհուրդ Յովնանու մարգարէի», եւ «Յաղագս Յովհաննու Մկրտչի», (Վենետիկ 1899) կրկին ճառերը:

4. *Գինթ (Վոր. 27), որ եւ Գնիթ (Մ. Խոր. ԳԼ. ԺԷ, 533. Կ, 542),* «պատուական Եպիսկոպոսն Դերջանոյ», (Վոր. անդ) ի բարձր Հայս. ինքը Շաղգովք ըսուած անապատին ու հովանաւոր ճգնարանին մէջ՝ *Մեսրոպայ աշակերտաց առաջին խմբին կը պատկանէր* (Մ. Խոր. Կ, 541—542). *Մեսրոպ իւր հետն առնլով զանիկայ՝ Մեղիտինէէն ճամբայ ելաւ, եւ ի միասին* «հասանէին ի թագաւորակաց քաղաքն Կոստանդինական», (Վոր. անդ). *ուր մեծ ընդունելութիւն եւ պատիւ գտնելնէն ետքը՝ թէ Թէոդոս Բ. Փոքր կոչուած թագաւորէն եւ թէ Ատտիկոս Կ. Պոլսի աշխարհամուտ գրան հայրապետէն, ասոնց գրած կրկին նամակներովն Հայաստան դարձան Ս. Սահակայ քովը* (Մ. Խոր. ԺԷ, 534—535):

5. *Եզնիկ Եպիսկոպոս, որ եւ Եզնակ (Վոր. 34),* «յԱյրարատեան գաւառէն ի կողը գեղէ», (Վոր. 32. — Մ. Խոր. Կ, 543—44).

ուստի եւ կողըացի կոչուած: Ինքն էր «Եպիսկոպոս Բագրեւանդայ», (Եղ. Յեղ. Բ, 49). *Վերոյիշեալ Պարսից ուղղեալ թղթոյն սկիզբը եպիսկոպոսաց ցուցակին մէջ՝ ըստ Եղեշէի (Անդ) չորրորդն է Եզնիկ, իսկ ըստ Ղլո. Փարպեցոյ՝ եօթներորդը միայն,* «Տէր Եզնիկ Բագրեւանդեայ Եպիսկոպոս», (Ղր. Բ. ԳԼ. ԻԳ, 138): — *Սահակ եւ Մեսրոպ խաւրեցին զինքն Յովսէփ Պաղնացոյն հետ մէկտեղ* «ի կողմանս Ասորաց ի քաղաքն Եզեսացոց... զե յասորական բարբառոյն՝ զնոցին հարցն սրբոց զաւանդութիւնս, հայերէն գրեալս դարձուցնն», (Վոր. 32—33). — «առաքենի Միջագետս ի քաղաքն Եզեսիա, զի որ միանգամ գտցի անդ գիրք ասացեալ նոցին սուրբ հարցն առաջնոց, թարգմանեալ ի մեր լեզուս բերցեն փութով. զի յետ այնր ի Բիւզանդիոն առաքեսցեն ի նոյն գործ», (Մովս. Խոր. Կ, 544): *Իրենք Եզեսիոյ մէջ գործերնին լմնցընելնէն ետքը, կատարած թարգմանութիւննին* «առ պատուական հարսն առաքեալ, անցեալ գնացին ի կողմանս Յունաց», (Վոր. 33). *Իսկ երբ բաւական ժամանակ յետոյ՝ Ղեւոնդ եւ Կորիւն ելան գնացին ի Կ. Պոլիս,* «մատուցեալ յարէին յԱզնիկն, իրրեւ առ ընտանեգոյն սննդակից՝ ի Կոստանդինական քաղաքին», (Վոր. անդ). *ասկից ամենքը մէկտեղ դէպ ի Աշտիշատ Տարծոյ ճամբայ ելլելով,* «հաստատուն օրինակօք աստուածատուր գրոցն, եւ բազում շնորհագիր հարց յետ այնր աւանդութեամբք, եւ նիկիական եւ Եփեսոսական կանոնօք՝ գային

երեւելով յաշխարհն Հայոց, եւ առաջի դնէին հարցն (Սահակայ եւ Մեսրոպայ) զբերեալ կտակարանն եկեղեցւոյ սրբոյ, (Կոր. 33). — «Մատուցին զթուղթսն եւ զկանոնս ժողովոյն Եփեսոսի՝ վեց սահմանեալ կանոնաւ գլխով, եւ զստոյգ օրինակս Գրոց» (Մով. Խոր. կա, 547): Այն ատեն սուրբն Սահակ «առեալ հանդերձ Եղնակաւ՝ զյառաջագոյն... զթարգմանութիւնս (Աստուածաշունչ Գրոց), հաստատէր ճշմարիտ օրինակօք բերելովք, եւ շատ եւս մեկնութիւն գրոց թարգմանէին» (Կոր. 34): Ինքը բաց ի ասորի լեզուէն՝ նաեւ «բաջ վարժեալ հելէն դպրութեամբ, ձեռնարկեաց ի թարգմանել եւ ի գրել» (Մով. Խոր. կ, 544). գիտէր եւս երբայական եւ պարսիկ լեզուներն: Ունինք այսօր իրմէն ընդդէմ՝ աղանդոց կամ Եղծ աղանդոց կոչուած ոսկեղինիկ աննման լեզուա իմաստասիրական մատենիկ մը (Վենետիկ 1826):

6. Երեմիա «սուրբ եպիսկոպոսն Աղուանից» (Կոր. 30), «եպիսկոպոսապեան Երեմիայ» (Մով. Խոր. ծգ, 522), «Տէր Երեմիա Մարգաստանի եպիսկոպոս» (Ղզը. Փրպ. Գր. Բ. ԳԼ. իգ, 139), «Երեմիա եպիսկոպոս Մարգաստանի» (ԵՂԸ. Յեղ. Բ, 49): Երբօր Մաշթօց Վարդապետ գնաց «ի կողմանս Աղուանից, եւ երթեալ իջանէր յաշխարհն. եւ հասեալ ի թագաւորական տեղիսն, տեսանէր զսուրբ եպիսկոպոսն Աղուանից, որում անուն Երեմիա կոչէին» (Կոր. 30). հոն ժողովելով տղաքներ այլեւայլ դաւաններէ, դպրոցներ կը բանային եւ ուսմունք

կը սորվեցընէին անոնց. յետոյ «երանելոյն Երեմիայի եպիսկոպոսի ի ձեռն առեալ՝ վաղվաղակի զաստուածային գրոց թարգմանութիւնս ի գործ արկանէր, որով անդէն յական թօթափել, վայրենամիտ եւ դատարկասուն եւ անամաբարոյ աշխարհն Աղուանից, մարգարէագէտք եւ առաքելածանօթք եւ աւետարանաժառանգք լինէին, եւ ամենայն աւանդելոցն Աստուծոյ՝ ոչ իւրք անտեղեակք» (Կոր. 31): Պարսից ուղղեալ նամակին գլուխն եղած եպիսկոպոսաց անուանց մէջ՝ ըստ Եղիշէի (անդ) իններորդն է Երեմիա, իսկ ըստ Ղզը. Փարպեցւոյ (անդ)՝ տասներորդը միայն:

7. Կորիւն եպիսկոպոս, «աշակերտ երանելոյն Մաշթօցի» (Ղզը. Փրպ. Գր. Ա. ԳԼ. Ժ, 38—39). Թէպէտ ինքը միւս աշակերտակիցներուն մէջ «կրտսերագոյն» (Կոր. 8) էր, սակայն այսու ամենայնիւ Վրաց եպիսկոպոս ձեռնադրուած էր Ս. Սահակ կաթուղիկոսէն, «եւ իմ անարժանիս՝ եղեալ ի կարգ եպիսկոպոսութեան վիճակ» (Անդ. 26): Երբ Ղեւոնդ եւ Կորիւն ըսեցին թէ՛ Յովսէփ եւ Եղնիկ Կ. Պոլիս գնացեր են, իրենք ալ «յիւրեանց կամաց ելին առ նոսա ի Բիւզանդիոն... որոց ընդունելութիւն ամենեցուն մեծապէս արար Մաքսիմիանոս եպիսկոպոսն Բիւզանդացոց» (Մով. Խոր. կ. 544—45): Գրած է «Պատմութիւն վարուց եւ մահուան առն երանելոյ սրբոյն Մեսրոպայ Վարդապետի» (Վենետիկ 1894), ըստ հրամանի Յովսէփ կաթուղիկոսին

եւ քաջարեւ յորդորմամբ իւր ընկերակցաց. եկեալ հասանէր առ իս հրաման ան միոյ պատուականի՝ Յովսէփ կոչեցելոյ, աշակերտի անն այնորիկ (Մեսրոպայ). եւ ընդ նմին այլոց եւս քաջարեութիւն աշակերտակցաց մերոյն վարդապետութեան» (Կոր. 8): Ղազար Փարպեցի (Գր. Ա. գլ. Ժ, 38. ԺԸ, 114) երկու տեղ կը յիշէ սոյն այս գրուածը: — Շատ հաւանորէն ինքն է թարգմանած յունարէն լեզուէ թէ Ազաթանզեղոսն եւ թէ Փաւստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց գիրքը, մեծ նմանութիւն ոճոյ գտնուելով այս կրկին թարգմանութեանց եւ իւր յորինած մատենկան միջեւ:

8. Մովսէս եպիսկոպոս Վրաց աշխարհին. Կորին կը գրէ թէ «յետ ժամանակի ինչ ընդ մէջ անցելոյ, հոգ ի մտի արկանէր սիրելին Քրիստոսի (Մեսրոպայ Վարդապետ) եւ վասն բարբարոսական կողմանն (Վրաստանի), եւ առնոյր կարգեալ նշանագիրս վճացերէն լեզուին, ըստ շնորհեցելոյ նմա ի Տեառնէ: Գրէր կարգէր եւ օրինօք յարդարէր. եւ առնոյր ընդ իւր զոմանս լաւագոյնս յաշակերտաց իւրոց, յարուցեալ գնայր իջանել ի կողմանս Վրաց, եւ երթեալ յանդիման լինէր... եպիսկոպոսի աշխարհին՝ Մովսէս» (Անդ. 25): Նոյնպէս կ'աւանդէ մեզի Մովսէս Խորենացի՝ գրելով. «Մեսրոպայ երթեալ յաշխարհն Վրաց, առնէ եւ նոցա նշանագիրս, տուեցելովն ի վերուստ շնորհան, ... ձեռնտու լինելով ... եւ եպիսկոպոսին Մովսիսի» (Անդ. գլ. ԺԳ, 522):

9. Մուշեղ եպիսկոպոս, որ եւ Մուշէ: Երբոր Մեսրոպայ Աղուանից աշխարհին մօտ Գողթան գաւառը քարոզելու գնաց, «ձեռնտու եւս եղեալ նմա սրբամատոյց վարդապետութեանն ի բաղասական կողմանս սրբոյ եպիսկոպոսին՝ որում Մուշեղ կոչէին» (Կոր. 31): Նոյնպէս կը գրէ Մեսրոպայ համար Մով. Խորենացին. հաւատալով զվարդապետութիւն կողմանցն այնոցիկ՝ եպիսկոպոսի, որում Մուշէն կոչէին» (Անդ. գլ. Կ, 543): — Աշտիշատու 449ին ժողովոյն ներկայ գտնուող եպիսկոպոսաց ցանկին մէջ՝ երրորդն է «Տէր Մուշէ Արծրունեաց եպիսկոպոս» ըստ Ղզր. Փարպեցոյ (Գր. Բ. գլ. ԻԳ, 138), իսկ ըստ Եղիշէի՝ «Մուշէ եպիսկոպոս Արծրունեաց» (Յեղ. Բ, 49) երկրորդսաներորդը: Վարդանանց պատերազմէն ետքն՝ երբ Ատորոմիզդ պարսիկ Մարզպանն Հայաստան եկաւ, սիրով եւ խաղաղութեամբ վարուելու սկսաւ մեր աշխարհին քրիստոնէից հետ, ուստի իր մօտը կանչեց նաեւ «ի տանէն Արծրունեաց բարեպաշտօն երէց մի Մուշէ անուն, որ առաջնորդէր աշխարհին Արծրունեաց» (Եղշ. Յեղ. Ե, 244), իրմէն տեղն ի տեղը հարցընելու իմանալու համար իրաց ստոյգ վիճակը: Պարսկաստան արտօրք գնացող եպիսկոպոսաց մէջ՝ Ղազար Փարպեցին կը գնէ նաեւ «ՂԴԴան երէցն իշխանին Արծրունեաց Ներշապհոյ՝ զտէր Մուշէ» (Անդ. Գր. Բ. գլ. ԽԲ, 248):

10. Սամուէլ եպիսկոպոս, «այր սուրբ եւ բարեպաշտօն՝ եպիսկոպոս կացեալ տանն

արքունականի» (Կոր. 26): Մեսրոպ վարդապետ երբ քարոզելու ելաւ Վրաց աշխարհին ժողովուրդներուն, «առաւելապէս պայծառացուցեալ ծաղկեցուցանէր զվարդապետութիւնն . . . եւ յանձն արարեալ զնոսա սրբոյ եպիսկոպոսին Սամուէլի, այնմ՝ զոր ի վերոյ նշանակեցաք, ինքն դառնայր ի կողմանս Հայոց Մեծաց» (Անդ. 32):

11. Տէր Խորձենացի եպիսկոպոս. «Տէր՝ ի Խորձենոյ» (Ղըբ. Փարպեցի. Գր. Ա. գլ. Ժ, 46). ինքն եւս Ս. Սահակ կաթողիկոսէն եպիսկոպոս ձեռնադրուած էր, ինչպէս կը գրէ Կորիւն. «առնոյր հաւանութիւն երանելին Մաշթոց, որպէս զի Տէր եպիսկոպոսն ի կայենականսն¹, եւ նա ի սփիւռ հեթանոսաց զբանն կենաց սերմանիցեն» (Անդ. 24): Երբոր Մեսրոպ վրաց աշխարհն երթալով՝ անոնց համար ալ նշանագիրներ ստեղծեց, իսկոյն իւր քովը ժողված տղաքներն երկու դասի բաժնելով՝ իւրաքանչեւրին վրայ իր աշակերտներէն մէկմէկ վերակացու դրաւ. ընտրեալ մանկունս, եւ յերկուս բաժանեալ դասս, եւ վարդապետս թողունոցա յաշակերտաց իւրոց զՏէր Խորձենացի եւ զՄուշէ Տարօնեցի» (Մով. Խոր. գլ. ծդ, 522). Հետեւաբար ինքն ալ Մեսրոպայ աշակերտներէն մին էր: Բայց շատ ցաւելով կը յաւելունք՝ թէ մերոնք «զհրեշտականման այրն Տէր՝ նոյն

¹ Մեծ Հայոց մէջ՝ Սաւորդաց ձոր կոչուած գետին վայձ Բերդ մը կար կայեն ըսուած. թուի թէ սոյն բերդին անունէն՝ շրջակայքն իսկ կ'անուանուէին կայենականք:

անհանգիստ հայածանօք վախճանեցուցին, որք եւ այժմ իսկ դեռ եւս անյարգութեամբ քինով ընդ մեռելոյն կագին» (Ղըբ. Փրպ. Թուղթ առ Վահ. Մամիկ. 685—86):

12. Աղան արծրունի, քեռի Վահանայ Մամիկոնենոյ. անիկայ եղաւ «որ զատոյցն զիս՝ կ'ըսէ Ղաղար Փարպեցի՝ պարեգօտիւք ի ծառայութենէ աշխարհիս» (Թուղթ առ Վահ. Մամիկ. 644). նոյն ազգային պատմիչն մեր՝ էր «սնեալ եւ ուսեալ առ ոտս առաքելակրօն երանելոյն Աղանայ, որ էր ազգաւ ի հոյակապ եւ յականաւոր տոհմէն Արծրունեաց» (Գր. Ա. գլ. ե, 16—17). եւ իրմէն ուսած էր սուրբ հաւատքը՝ տղայութեան ժամանակ, «սուրբ եւ ստոյգ հաւատ, զոր ուսեալ ի տղայութեանն յերանելոյ Աղանայ, կեամ նովիմբ ի նմին անփոփոխութեամբ, մինչեւ ի վախճան կենցաղոյս իմոյ» (Թուղթ առ Վահ. Մամիկ. էջ 687): — Արտաշատու 449ի ազգային ժողովոյն ներկայ կը գտնուէին ո՛չ միայն եպիսկոպոսներ, հապա նաեւ «պատուական երիցունք եւ աւագ վանականք բազումք, հանդերձ սքանչելի եւ հրեշտակակրօն տերամբն Աղանաւ, որ էր յազգէն Արծրունեաց» (Գր. Բ. գլ. իգ, 139):

13. Արձան, աշակերտ Մաշթոց վարդապետի (Ղըբ. Փրպ. Գր. Բ. գլ. լւ, 229), եւ ընկեր Յովհաննու՝ որուն հետ ի միասին Բիւզանդիոն զրկուեցաւ Ս. Սահակէն եւ Մեսրոպէն. սակայն իրենք «յուլաբար ուղեւորեալ,

եւ ծուլաբար դեգերեալք պատաղեցան ի կեսաբիա» (Մով. Խոր. Անդ. 4, 545):

14. Գիտ կամ՝ Գիւտ. երբոր Մեսրոպ Գողթան գաւառը գնաց աւետարանը քարոզելու նոյն տեղուան ժողովրդոց, «կարգէր յամենայն գիւղս գաւառին՝ դասս սրբոց վանականաց. որում եւ հասեալ ժամանեալ հայրաբարուն Գտայ, որդւոյ Շաբաթայ առն քրիստոսասիրի, բազում սպասաւորութիւն իրրեւ հաւասարի որդւոյ վարդապետին տանէր» (Կոր. 24): Նոյնպէս կը պատմէ Մովսէս Խորենացին՝ թէ Մաշթոց լսելով որ տակաւին նոյն գաւառին մէջ կայ «մնացեալ արմատ դառնութեան հեթանոսական աղանդոյն... բնաբարձ արարեալ երանելոյն (Մեսրոպայ), հանդերձ օգնականութեամբ հօրաբարոյին Գտայ, որդւոյ Շաբիթայ՝ իշխանի գաւառին» (Անդ. 4, 542):

15. Դանան, աշակերտ Մեսրոպայ եւ անոր ձեռք Աղուանից երկրին քրիստոնէից վրայ վերակացու դրուած. «առ որս թողեալ վերակացուս հաւատացելոցն՝ զերկուս ոմանս յիւրոց աշակերտացն. որ... երկրորդին՝ Դանան (անուն էր), այր կրօնաւոր եւ յառաջադէմ՝ յաւետարանական սպասաւորութեանն» (Կոր. 30): Իսկ Մովսէս Խորենացի կը գրէ թէ՛ Մեսրոպ «թողեալ վերակացուս յիւրոց աշակերտելոցն... յեկեղեց՝ զԴանան» (Անդ. 4, 542), բարձր Հայոց մէջ:

16. Ենովք, նոյնպէս աշակերտ Մեսրոպ վարդապետի: — Երբոր Մաշթոց Աղուանից

աշխարհը գնաց, եւ հոն «ըստ վերնապարգեւ կորովի սովորութեան իւրում» (Կոր. 29) աղուաններէն ըզուին նշանագիրներն ստեղծեց, անկից մեկնած պահուն «թողեալ վերակացուս հաւատացելոցն՝ զերկուս ոմանս յիւրոց աշակերտացն. որ առաջնոյն Ենովք անուն էր... այր կրօնաւոր եւ յառաջադէմ յաւետարանական սպասաւորութեանն» (Անդ. 30). յետոյ ինքն ուրիշ շատ մը աշակերտներով կ'երթար կը հասնէր վաղարշապատ քաղաքը՝ Ս. Սահակայ քովը: Մովսէս Խորենացի կը պատմէ թէ՛ Մեսրոպ իր աշակերտներէն վերակացու դրած էր «զԵնովք ի Սպեր» (Անդ. 4, 542) բարձր Հայք նահանգին մէջ:

17. Երեմիա երէց, որ Ս. Սահակայ սարկաւազապետն՝ այսինքն աւագ սարկաւազն էր. ինքը ծննդեամբ՝ բնիկ վաղարշապատցի էր, «երանելի երէցն Երեմիա ի Նոր Քաղաքէ» (Ղզը. Փրպ. Գր. Բ. գլ. 1, 186), եւ Սահակ կաթուղիկոսին ձեռնասուն աստուածասէր պաշտօնէից դասուն գլուխն էր. «որոյ գլխաւորին Երեմիա անուն ճանաչէր, այր սուրբ եւ բարեպաշտօն» (Կոր. 42). «այր սուրբ եւ երկիւղած յԱստուծոյ» (Նոյն համ. անդ): Երբ մեր անմահանուն Հայրապետը Բագրեւանդ գաւառին Բլրոցաց գիւղին մէջ իւր սուրբ հոգին առ Աստուած աւանդեց, «զպատուական մարմին նորա բարձեալ սարկաւազապետի նորին Երեմիայի՝ հանդերձ աշակերտակցօք եւ տիկնաւն Մամիկոնենից, նորին նուաւ, որում անուն էր

Գատրիկ, կին Ղարգանայ ստրատելատի, տա-
րեալ հանգուցին յիւրեանց գիւղն յԱշտիշատ,
որ է ի գաւառին Տարօն» (Մով. Խոր. Անդ. կէ,
567—68): Դոյնպէս կը կարգանք Կորեան թէ
ընդարձակ եւ թէ համառօտ Պատմութեան
մէջ. «բարձեալ զսուրբն (Սահակ) սաղմոսիւք
եւ օրհնութեամբ եւ հոգեւոր բարբառով, յետ
սակաւ ինչ աւուրց ընդ տիւ եւ ընդ գիշեր ի
Տարօն հասուցանէին մինչ ի բուն իսկ գիւղն
յԱշտիշատ: Եւ անդ ի մարտիրոսական խորանին
յարկեղ սրբոցն, հանդերձ ամենայն անուշահոտ
խնկօք եղեալ եւ կնքեալ քրիստոսական կնքովն՝
եւ զօրինաւոր յիշատակն ի վերայ կատարեալ,
այնուհետեւ իւրաքանչիւրն դառնային» (Անդ.
42). «բարձեալ զմարմին երանելոյն բազում
ամբոխիւ, եպիսկոպոսօք եւ քահանայիւք, սար-
կաւագօք եւ դպրօք» (Դոյն համ. անդ):

18. Թաղիկ, որ եւ Թողիկ (Կոր. համ.
46). Ինքն եւս Ս. Մեսրոպայ գլխաւոր աշա-
կերտներէն մին եղած է. «անուանք գլխաւորաց
աշակերտացն՝ են այս... երկրորդին Թաղիկ.
այր զգաստ՝ զգուշագոյն հրամանաց վարդա-
պետութեանն» (Կոր. 44): Մեսրոպայ մահուա-
նէն եւ Օշականի մէջ թաղուելէն երեք տարի
ետքը, «ընորին աշակերտ Թաղիկ անուն՝ զայր
զգաստ եւ բարեպաշտօն, հանդերձ եղբարքք
երանութեանն հասելոց՝ սպասաւոր սրբոցն (ուղ-
ղելի՛ սրբոյն, ինչպէս ունի Կորիւն համառօտ
անդ՝ սպասաւոր նորին) ի փառս Աստուծոյ
կարգէին» (Անդ. 46): — Սոյն անունը՝ Մով-

սէս Խորենացի Թաթիկ՝ կը գրէ, որ ուղղ-
չերեւիր՝ Թադէոսի նուազականն ըլլալով. «ի
հանգիստ զնա (զՂարգապեան Մաշթոց) փոխե-
ցին Ղահան եւ Թաթիկ նորին արբանեակք»
(Անդ. գլ. կէ, 570):

19. Խոսրով Թարգմանիչ, որ եւ Խոս-
րովիկ Թարգման: — Պարսկաստանի Դոր Զուղա
քաղքին մէջ գտնուած հայերէն ձեռագիր մը՝
հետեւեալ խորագիրն ունի. «Խոսրովայ Թարգ-
մանչի՛ Պատմութիւն Սրբոյն Սահակայ»: Թե-
պէտ Սուրբը Հայկականը Հաւաքածոյն Բ.
Հատորին մէջ կայ «Պատմութիւն վասն Սրբոյն
Սահակայ Հայրապետին եւ Մեսրոպայ Վար-
դապետին» (Ղենետիկ 1853) վերնագրով
գրուածք մը անանուն մատենագրի, սակայն
ընդուն յայտնապէս մատենացոյց կ'ընէ մեզի՝ թէ
մեր ոսկեղենիկ դարունը չէ. սոյն գրքոյկին կը
յաջորդեն նոյն հատորին մէջ «Տեսիլ Ս. Սահա-
կայ», եւ «Կանոնք Ս. Սահակայ», արդ՝ մեծ-
արդոյ Հ. Յովսէփ Վ. Գաթրձեան կը գրէ թէ՛
յիշեալ կանոնը Զ. դարուն առաջին տաս-
նամեակներուն մէջ սուտ անուան մը տակ կար-
կատուած են, Սրբոյն Սահակայ մահուանէն
100 տարի ետքը (Սրբ. Պատարագամտոյցք
Հայոց, յէջս 141, 231 ծան. 38, 323 եւ

1. Ղազար Փարպեցի (Գր. Բ. գլ. Էդ, 139 եւ Խթ.
292) եւ Եղիշէ (Յեդ. Բ, 49 եւ Ը, 341) կը յիշեն «Թաթիկ
եպիսկոպոս Բասենոյ», — «Տէր Թաթիկ Բասենոյ եպիս-
կոպոս», որ Ասորեստանի մէջ մարտիրոսուած է: — Սոյոյգ
ապացոյց մը չունինք վերոյիշեալ Թադէի՛ սոյ Թաթիկին
հետ նոյնացընելու:

733): Շատ հաւանօրէն խօսքով թարգմանչին յօրինածն ու գրածը՝ պիտի ըլլայ Ս. Սահակայ ընդարձակ Պատմութիւնն, որ ձեռքերնիս հասած չէ, եւ վերջիշեալ գրքոյկին մէջ միայն կը յիշուի սա՛ խօսքերով. «առաւել քան զոյն զոր գրեալ է ի կատարեալ պատմութեանն» (Անդ. 37): — Իսկ Ղաղար Փարպեցի այսպէս կը գրէ սոյն թարգմանչին վրայ. «անարատ եւ յամենեցունց յարգելի յոյսն՝ տէր խօսքովիկ, չեւ եւս հասեալ ի սահմանս մեր, մինչդեռ գայր ի ճանապարհի եւ լուան, որպէս ի թշնամոյ ընդդէմ զինեցան, ասելով. ահա, ո՛ր գայ միւս թարգմանն: Եւ օրհնելոյն ի հեռաստանէ լուեալ զգունչիւն մահաձայն աղեղանցն՝ աղօթեաց առ բարձրեալն, եւ վաղվաղակի ընկալաւ զերնդիրն (հոգին առ Աստուած աւանդելու անշուշտ): որում եւ տենչալի նշխարացն այլք՝ եւ ոչ մէք՝ արժանի եղեն ընդունակութեան» (Թուղթ առ Վահ. Մամիկ. էջ 686): Յիշեալ վկայութեան վրայ սա՛ խորհրդածութիւնը կ'ընէ Մեծարգոյ Հ. Յակովբոս Վ. Տաշեան. «կարծենք թէ Փարպեցոյ խօսքէն առեալ կրնանք ընդունիլ որ խօսքովիկ էր արդեամբք «թարգման» եղած իւր ուսման պարապած միջոցին յօտարութեան, ուստի իւր թարգմանութեամբք արդէն ծանօթ անձնաւորութիւն էր, երբ դեռ չէր դարձած վերջին անգամ ի հայրենիս, ուր չժամանեց հասնիլ: Գժբախտաբար խօսքովիկայ գրութիւնքն ալ անյայտ են ... առաջին հայեցուածքով իսկ կը տեսնուի որ շատ խնդրական

են (իրեն ընծայուած) այս չորս գրութիւնք ալ» (Մատենագրական մանր ուսումնասիրութիւնք, էջք 50—51. Վիեննա 1895):

20. Ղեւոնդ երէց, որ եւ Ղեւոնդէոս կամ Ղեւոնդէս (Կոր. 27, 33), էր «ի Վանանդայ՝ ի գեղջէ Իջւանից» (Եղշ. Յեղ. Ը, 341—42): Ինքն էր «այր հաւատարիմ եւ ճշմարտապատում» (Կոր. 27), եւ միանգամայն մին «ի պատուական երիցանց» (Ղըք. Փրպ. Դր. Բ. ԳԼ. Իգ, 139), «այրն Աստուծոյ» (Անդ. Խբ, 251, Խդ, 262. Խզ, 285), «երանելի այրն Աստուծոյ» (Անդ. ծղ, 334. ծէ, 341), «սուրբ այրն Աստուծոյ» (Անդ. Խգ, 267. ծղ, 335 եւ 337. ծէ, 343, 350 եւ 353): Եղեջէ եւս կ'անուանէ զանիկայ «երանելի երէց» եւ «սուրբ երէց» (Յեղ. Ե, 198, 213): Մեսրոպ Վարդապետին գլխաւոր աշակերտաց մին էր. եւ երբ Մաշթոց իւր բազմութիւ աշակերտներովն ելաւ Մելիտինէ դնաց՝ նոյն քաղքին Ակակիոս եպիսկոպոսին յանձնելով զանոնք, «գլխաւոր աշակերտացն՝ թողոյր գայն, որում Ղեւոնդէոսն կոչէին» (Կոր. 27. — Մով. Խօր. ծէ, 533). որ եւ յետոյ Կորեան հետ ի միասին Բիւզանդիոն դնաց (Կոր. 33): Արտաշատու 449ին գումարուած ժողովոյն մէջ բաց ի եպիսկոպոսներէ՝ կային նաեւ «ի պատուական երիցանց՝ Սուրբն Ղեւոնդ» եւ այլք (Ղըք. Փրպ. Դր. Բ. ԳԼ. Իգ, 139): Ինքն իւր հինգ ընկերակիցներովը՝ Վարդանանց պատերազմէն ետքը մարտիրոսուեցաւ յամին 454, Պարսկաստանի Ապար

աշխարհին Նիւշապուհ քաղաքին մօտերը. «ի մեծ անապատին յԱպար աշխարհի ի սահմանս Նիւշապուհ քաղաքի» (Եղշ. Յեղ. Ը, 348). «մերձ ի գեօղն մոգուց՝ որ անուանեալ կոչի Ռեւան» (Ղլը. Փրպցի. Գր. Բ, ծէ, 343—44), ուր յետ դառն չարչարանքներ կրելու, «հատին գգլուէս Սրբոյն սուսերաւ» (Անդ. 342), իւր կատարմանէն ետքն՝ «ահա յանկարծակիի նմանութիւն լուսաւոր արծուոյ սլացեալ հասանէր յերկնից, եւ իջեալ նստէր ի վերայ մարմնոյ սրբոյ առն Աստուծոյ Ղեւոնդի» (Անդ. 350):

21. Մուշէ Տարօնեցի, «ի նահանգէ Տարօնոյ» (Կոր. 24). Ինքը Ս. Մեսրոպայ աշակերտ եւ օգնական եղած է. «հանդերձ այլովք եւս օգնականօքն. որոց... երկրորդին Մուշէ անուն... որ էր սուրբ եւ զուարթագոյն» (Անդ): Նոյնը կը կրկնէ Ղազար Փարպեցի գրելով թէ՛ Սուրբն Սահակ իբր օգնական տուած էր Մեսրոպայ «արս բանիբունս եւ մտացիս ի քահանայիցն Հայոց... եւ չորրորդին (անուն էր) Մուշէ՛ ի Տարօնոյ (Գր. Ա. գլ. Ժ, 46): — Երբ Մեսրոպայ Վրաց աշխարհն երթալով՝ անոնց համար ալ նշանագիրներ ստեղծեց, իր քովը ժողված տղաքներն երկու դասի բաժնեց եւ ամէն մէկուն վրայ իւր աշակերտներէն Վարդապետ կարգեց «զՏէր խորձենացի եւ զՄուշէ տարօնեցի» (Մով. Խոր. Անդ. ծգ, 522):

22. Յովհանն, որ եւ Յոհանն. Մեսրոպայ աշակերտաց մէջ՝ էր «գլխաւոր, վերակացու, տեղապահ... որոց... երկրորդն այլ աշակերտ

Յովհանն անուն. այր իսկ սուրբ, վարդապետասէր եւ ճշմարտապատում» (Կոր. 46): Ղեւոնդ երէցէն ու Կորիւնէն ետքն՝ ինքն ալ Արձանի հետ ելաւ Բիւզանդիոն գնաց, «զորս կանխագոյն առաքեալ էր մեծին Սահակայ եւ Մեսրոպայ» (Մով. Խոր. Կ, 544—45). ուր շատ մեծ պատիւ եւ ընդունելութիւն ըրաւ անոնց Պոսոյ Հայրապետն, «որոց ընդունելութիւն ամենեցուն մեծապէս արար Մաքսիմիանոս եպիսկոպոսն Բիւզանդացոց» (Անդ. 545): — Մեսրոպ Վարդապետին մահուանէն յետոյ՝ ինքը շատ մը չարչարանքներ կրեց Պարսկաստանի Տիգրան քաղաքին մէջ, եւ խոստովանողի անունն իսկ ժառանգեց. «բազում եւ ազգի ազգի փորձութեանց եւ կապանաւոր վշտաց, մենամարտիկ երկպատական բռնութեանն ի Տիգրան քաղաքի, վասն քրիստոսի յաղթութեամբ տարեալ համբերեաց. վասն որոյ զխոստովանողական անուն ժառանգեաց» (Կոր. 46—47): Համառօտ Կորեան մէջ՝ կը կոչուի ինքն «այր ճշմարտասէր եւ ողջախոհ» (46 ի ստորեւ): Եւ որովհետեւ Յովսէփ կաթողիկոսին պէս՝ ինքն եւս գլխաւոր ու վերակացու դրուած էր, երբ Պարսից աշխարհէն ազատեցաւ՝ իսկոյն «ի նոյն վերակացութիւնն դառնայր յերկիրն Հայոց» (Կոր. 47):

23. Յովհանն Եկեղեցացի, «յեկեղեաց գաւառէն» (Կոր. 19). — «Յովհանն Եկեղեցային» (Մով. Խոր. ծգ, 520): Ինքն ալ աշակերտ էր Ս. Մեսրոպայ, որուն հետ ի միասին Սամոսատ քաղաքն երթալով, հոն յետ գիւտի

Հայերէն նշանագրաց՝ իսկոյն «ի թարգմանութիւն դառնային հանդերձ արամբք երկուք, աշակերտօքն իւրովք: որոյ առաջնոյն Յովհաննան կոչէին... եղեալ սկիզբն նախ յԱռակացն Սողոմոնի... եթէ՝ «ճանաչել զմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ» (Կոր. 19): Ղազար Փարպեցի կ'աւանդէ թէ՝ Սուրբն Սահակ այլեւայլ օգնականներ տուած էր Մաշթոց վարդապետին «արս բանիբունս եւ մտացիս ի քահանայիցն Հայոց... որում առաջնոյն անուն էր Յոհանն՝ ի գաւառէն Եկեղեցաց» (Գր. Ա. 4Լ. Ժ, 46):

24. Յովնաթան քահանայ, աշակերտ Մեսրոպ վարդապետի՝ որ զանիկայ Աղուանից երկրին ժողովոցոց վրայ վերակացու դրած էր. «զմանս յիւրոց աշակերտացն (Մեսրոպ) վերակացուս իւրեանց կացուցանէր, հանդերձ արամբքահանայիւ արքունական դրանն, որում անունն Յովնաթան կոչէին, որոյ բազում յօժարութիւն ի վարդապետութենէն էր գտեալ» (Կոր. 31): Նոյնպէս կը գրէ Մովսէս Խորենացի թէ Մաշթոց «վերակացու թողեալ զաշակերտ իւր զՅովնաթան, միանգամայն եւ քահանայս կացուցեալ դրանն արքունի, ինքն դառնայ ի Հայս» (Անդ. ծգ, 523) Ս. Սահակայ քովը:

25. Յովսէփ Պաղնացի, «ի Պաղանական տանէն» (Կոր. 19), աշակերտ Ս. Մեսրոպայ: — Երբ Մաշթոց Սամոսատ քաղքին մէջ Հայերէն նշանագիրներն ստեղծեց, «իսկոյն ի թարգմանութիւն ձեռն արկեալ, խորհրդա-

բար սկսանելով յԱռակաց, բովանդակ զքսան եւ երկու՝ յայտնիսս (հին կտակարանին գրքերն) եւ զնոր կտակս յեղուլ ի հայ բան, նա եւ աշակերտք նորա Յոհանն եկեղեցային եւ Յովսէփ պաղնացի» (Մով. Խոր. ծգ, 520). Նոյնպէս կ'աւանդէ Կորիւն՝ թէ «ի թարգմանութիւն դառնային հանդերձ արամբք երկուք, աշակերտօքն իւրովք... երկրորդին Յովսէփ անուն ի Պաղանական տանէն» (Կոր. 19): Ինքն Եգնկայ հետ մեկտեղ Եղեսիա խաւրուեցաւ, հոն գտնուած ասորերէն լեզուաւ հին Հարց մատենաներն Հայերէն թարգմանելով՝ Հայաստան բերելու համար. «դէպ լինէր եղբարս երկուս յաշակերտացն՝ յուղարկել ի կողմնս Ասորոց ի քաղաքն Եղեսացոց, զՅովսէփ, զոր ի վերոյն յիշեցաք... զի յասորական բարբառոյն՝ զնոցին հարցն սրբոց զաւանդութիւնս, Հայերէն գրեալս գարձուցեն» (Անդ. 32—33): Երբոր իրեն յանձնուած գրական աշխատութիւնն աւարտեց Եղեսիայի մէջ, ճամբայ ելաւ անկից Եգնկայ հետ ի միասին եւ Կ. Պոլիս հասաւ առանց հրամանի Սահակայ եւ Մեսրոպայ. «ընկալեալ զհրապուրական թուղթս սուտակասպասաց ոմանց, իբր թէ պատրաստին մեծն Սահակ եւ Մեսրոպ զայլս առաքել ի Բիւզան-

1 Կիւրեղ Երուսաղէմացի «Վասն Սուրբ Գրոց», ձառին մէջ՝ կը գրէ. «ընթեանիջիր զքսան եւ զերկու գիրս հնոց կտակարանաց, որ յեթմաստուն եւ յերկուց թարգմանացն թարգմանեալ են», (Կոչ. Ընճ. Գ. 68. Վիեննա 1832): Իսկ թէ որոնք են այն 22 գրքերը, մի առ մի կը համրէ նոյն Ս. Հայրն յիշեալ մատենին մէջ (էջ 70):

դիոն, վասն որոյ առանց հրամանի վարդապետացն իւրեանց՝ նոյն ընդ նոյն չուեալ գնացին ի Բիւզանդիոն, նախանձաւոր բարեաց եղեալ ուսմանց» (Մով. Խոր. 4, 544): Սահակ կաթուղիկոս շատ մը օգնականներ տուած էր Մեսրոպայ, «արս բանիբունս եւ մտացիս ի քահանայիցն Հայոց... երկրորդին (անուն էր) Յովսէփ ի Պաղանական տանէն» (Ղզը. Փրպ. Դր. Ա. գլ. Ժ, 46):

26. Տիրայր, որ Մեսրոպայ աշակերտ եւ իւր օգնականներէն առաջինն էր. «որոց առաջնունն Տիրայր անուն ի խորձենական գաւառէն... որ էր սուրբ եւ զուարթագոյն» (Կոր. 24): Ուրիշ տեղեկութիւն մը չունինք այս անձին վրայ: — Մեծարգոյ Հ. Գ. Ա. Զ. իւր «Հայկական հին Գպրութեան պատմութեան» մէջ այս Տիրայրը նոյն կը համարի Տէր Խորձենացոյն հետ, զոր կը յիշեն Մովսէս Խորենացի եւ Ղազար Փարպեցի. բայց մենք սոյն վերջինը վերը դրած ենք արդէն Եպիսկոպոսաց շարքին մէջ. եւ ըստ Կորեան՝ յայտնի կ'երեւի (Անդ) թէ երկու տարբեր անձինք են:

Նմանապէս այս ցուցակէն դիտմամբ դուրս կը թողունք Ստեփանոս Տարօնեցին (Հայկ. Հին Գպր. պատմ. էջ 294), որովհետեւ իւր անուան յիշատակը չկայ մեր վերն յիշած հին պատմագրաց եւ ո՛չ միոյն մէջ:

27. Վահան Ամատունի, որ զինուորական կարգէ էր եւ Ս. Մեսրոպայ աշակերտ իսկ. «անուանք գլխաւոր աշակերտացն ժողո-

վելոցն՝ են այս... ի զինուորական կողմանն, առաջնունն Վահան անուն յազգէն Ամատունեաց, որ էր հաղարապետ Հայոց Մեծաց... այր պատուական երկիւղած հրամանակատար վարդապետական հրամանաց» (Կոր. 44—45): Իսկ նոյն Կորեան համառօտ պատմութեան մէջ կը կոչուի, «աստուածասէր եւ երկիւղած յԱստուծոյ... քրիստոսասէր... եւ բարեացապարտ» (Անդ. 45, 46, 47): Ս. Մեսրոպ էրբ Վաղարշապատի մէջ հոգին առ Աստուած աւանդեց, «առեալ Վահանայ... կազմութեամբ վախճանելոյ, հանդերձ աշխարհական ամբոխիւ, ... կանթեղօք վառելովք եւ ջահիք բորբոքելովք եւ ամենայն լուսաճաճանչ գնդիւն յՕջականն ելանէին, եւ անդ ի մարտիրոսարանն մատուցեալ, զօրինաւոր յիշատակն կատարեալ... դառնային: Իսկ յետ երկից ամաց անցելոց, յաջողեցան Վահանայ Ամատունոյ, քրիստոսասէր փութով խորան սքանչելի կանգնել, տաշածոյ վիմօք քանդակելով, եւ ի ներքսագոյն խորանին զարբոյն հանգիստն յօրինեալ, որոյ սպասս վայելուչս գունագոյնս պայծառատեսիլս ոսկով եւ արծաթով եւ ակամբք պատուականօք՝ ... պատրաստեաց» (Անդ. 45—46): Մովսէս Խորենացի կ'անուանէ զինքը «բաջն Վահան ամատունի, զի էր զօրաւոր հաւատովք եւ ճոխութեամբ մարմնաւորաւ» (Անդ. 45, 570). Ղազար Փարպեցի կը գրէ նաեւ թէ «առեալ իշխանին Ամատունեաց Վահանայ զմարմին առաքինւոյն (Մաշթոցի)՝ տարաւ յիւր ի գեօղն, որ

անուանեալ կոչի Օշական» (Գր. Ա. գլ. ԺԹ, 117): Իսկ «Պատմութիւն վասն Սրբոյն Սահակայ», մասնական անանուն գրիչը կը պատմէ՝ թէ «յոյով հակառակութիւն լինէր վասն երանելւոյն (Մեսրոպայ), զի իւրաքանչիւր ոք յիւրն յօժարէր բնակութեան հանգուցանել զսրբանեալ մարմին նորա. եւ զօրացեալ լինէր տէրն Օշականու մեծ իշխանն Հայոց Վահան, եւ մեծա հանդիսիւ տարեալ հանգուցանէր զնա ի յասացեալ գիւղն Օշական» (Սոփ. հայկ. Բ, էջ. ք 36—37): Եղիշէ յիշատակելով առանձինն յականէ յանուանէ «Անուանք նախարարացն, որք կամօք յօժարութեամբ վասն սիրոյն Քրիստոսի ետուն զանձինս ի կապանս արքունի», այն 35 աւագ եւ կրտսերագոյն նախարարաց թուոյն մէջ կը դնէ նաեւ «յաղգէն Ամատունեաց Վահան» (Անդ. Յեղ. Ը, 369): Նոյնպէս Ղազար Փարպեցի յիշելով Արտաշատու 449ին գումարեալ ժողովոյն մէջ ներկայ եղողները, կը գրէ՝ «որ ի նախարարացն էին ժողովեալք, ... տէրն Ամատունեաց Վահան» (Գր. Բ. գլ. ԻԳ, 139—140): Հայք Վարդանանց պատերազմին ժամանակ՝ «պատրաստեալ ճանապարհին Յունաց կազմէին զիշխանն տանն Ամատունեաց Վահան, որպէս զայր մտացի եւ խորհրդական» (Անդ. ԻԳ, 205), ուրիշ երկու նախարարաց հետ ի միասին Վ. Պոլիս երթալու. ասոնք գնացին «յանդիման եղին թագաւորին Թէոդոսի. որոյ լուեալ զպատճառ նոցա երթիցն, սիրով լսէր ի նոցանէ. եւ յանձն առնոյր օգնել

նոցա գնդիւ. եւ մինչդեռ պատրաստէր գիրս խոստմանն, հասեալ վախճան սրբոյն (Թէոդոսի)՝ վճարէր ի կենցաղոյս» (Անդ. Խա, 242) յամի 450: Նոյնը կը կրինէ Եղիշէ. «մինչ դեռ երանելին Թէոդոս հարցանէր զամենայն սինկղիտոսն, եւ հնարս իրացն կամէր գտանել խաղաղութեամբ, եւ հոգ տանէր մեծաւ յօժարութեամբ, ... ի նմին ժամանակի անդէն վաղվաղակի հասանէր վախճան կատարածի կենաց նորա, եւ կարիչար խափան լինէր գործոյն օգնականութեան» (Անդ. Յեղ. Գ. 133—134): Վերջապէս ուրիշ 30 նախարարաց հետ՝ ինքն ալ Պարսկաստան արսորուեցաւ. «ի տոհմէն Ամատունեաց Վահան ... զսոսա երեսուն եւ մի այր ի նախարարացն Հայոց, հրաման տայր թագաւորն Յակոբեոս խիստ կապանօք պահել անդէն ի Վրկանի» (Ղզ. Փրպցի. Գր. Բ. գլ. Խէ, 286—287):

28. Հմայեակ Մամիկոնեան, թուոն Ս. Սահակայ եւ որդի Համաղասայ՝ տեառն Մամիկոնէից. իր մեծ եղբայրն էր Վարդան Մամիկոնեան: Ղազար Փարպեցի կ'անուանէ զինքը «սուրբ սեպուհն» (Գր. Բ. գլ. ԼԳ, 205) եւ «երանելի սեպուհն» (Անդ. Խա, 245): Ինքն ալ նախորդին պէս՝ զինուորական կարգէ էր եւ միանգամայն աշակերտ Մեսրոպայ. «անուանք գլխաւոր աշակերտացն ժողովեցոցն՝ են այս ... ի զինուորական կողմանն ... անուն երկրորդին Հմայեակ ի Մամիկոնեան տոհմէ, այր պատուական երկիւղած հրամանակատար վարդապետական հրամանաց» (Նոր. 44—45). Թէպէտ

Տամառօտ կորիւնն յետեւառաջութեամբ այսպէս
կը գրէ, «իսկ ի զինուորացն՝ առաջնումն Հմայ-
եակ՝ ի Մամիկոնեան տոհմէն, եւ երկրորդին
Վահան՝ յաղգէն Ամատունեաց» (Անդ. ի ստու-
րեւ): Ոչ միայն Վահանայ Ամատունեոյ հետ
Յունաց Թէոդոս Բ. կայսեր քովն առաքուեցաւ
(Ղգժ. Փրպ. Անդ, 205—206), հապա նաեւ
յառաջագոյն նոյն մեծ իշխանին հետ ի միասին
Ս. Մեսրոպայ մահուան ու փառաւոր յուշար-
կաւորութեանն իսկ ներկայ գտնուեցաւ (կոր.
45): — Սահակ կաթողիկոս «Թողու զՄեսրոպ
ի վերայ վարդապետութեան կողմանն արեւմտից,
եւ առ նմա զԹոռուես իւր զՀմայեակ եւ զՀա-
մաղասպեան զեղբարսն Վարդանայ ստրատե-
լատի» (Մով. Խոր. ծը, 538): Խաղղեաց եր-
կրին Տայոց Չորագաւառին Որջնհաղ գիւղին
մտերը, «զկատարելութեան պսակն ընդունէր,
զոր երանելի սեպուհն Հմայեակ՝ փափաքանօք
եւ բազում ցանկութեամբ խնդրէր, ժամանել
զինի սուրբ եղբօրն իւրոյ (Վարդանայ), եւ
վաղվաղակի լսելի լինէր. զի հայեցեալ Աստու-
ծոյ ի փափաք առնն՝ կատարէր զհայցուածսն,
եւ պսակէր զսուրբն» (Ղգժ. Փրպցի. Գր. բ.
գլ. Խա, 243): Իսկ Եղիշէ կը յաւելու՝ Թէ
Պարսից վրայ հայոց ըրած «յայնչափ յանդուգն
յարձակմանէն՝ միայն երանելին Հմայեակ, եղ-
բայր սպարապետին Հայոց Վարդանայ, յանխնայ
քաջութեամբ մարտուցեալ՝ կատարեցաւ նա-
հատակութեամբ» (Անդ. Յեղ. Ե, 239):

ՀՀ Ազգային գրադարան



NL0335383

